Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կես արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, բե մայրաքաղաքին եւ իւր արուարձանաց եւ բե գաւառաց համար :

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կրնդունուի :

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարե :

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապես Պահճե-Գափու ջրավաճառ. եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ ադայից խանութները :

Ծանուցման տողը 3 դրուշ է մեկ անգամի համար : Աւելի ածան կըլլայ աւելի անգամներու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի ատ. Տ՚օբեճ-Տէր Հ. Ս. Ալատճատեան ի. Պալիս Պալըզ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

ՓՈՒՆՋ

Թիւ 1995 — ԵՍ Ա. Բ Ա. Թ — 1886 ՄԱՅԻՍ 24

ԱԶԳԱՅԻՆ

ՄՇԱԿ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

ԵԹԷ կան մարդիկ որ սուտը՝ սխալը հանարձակ՝ մանաւանդ թէ անպատկառ ըրուցել սովորութիւն ըրած են, եթէ կան մարդիկ որ ղրպարտել՝ վատահամբաւել սովորութիւն ըրած են անպատիժ, նոյնպէս կան լրագիրք որ նոյնօրինակ յախուռն յարձակումն՝ սուտն ու սխալը իրենց արհեստ ընելով յաջողեր են տգիտին և ոամկին առաջ, և այդ գործողութեան անունը ծպտել դրած են, և նոյնանէ մին և առաջինը՝ Մշակ անուն թերթըն եղած է :

Մենք որ առանձնութեան՝ կրնանք ըսել մտքի մէջ նստած մարդկանցմէ եմք, մեր աղգին անցեալին և ներկային հետաքրքիր, տարիներով կարդացեր եմք ուրիշ հայ լրագրայ հետ և այդ Մշակը : Պէ՞տք է ըրուցել, թէ ի՞նչ աղգեցութիւն ըրած է մեզի, – կը խոստովանինք թէ ցաւ և տխրութիւն եղած է մեր բաժինը : Որովհետև փոխանակ աղգային յառաջադիմութեան՝ ցտրալի յետադիմութիւն նշմարեր ենք այդ լրագրին յառաջադիմութեան մէջ աղգին համար :

Բայց տրենք ըսածնիս : Մենք երբ յառաջադիմութիւն կ՚ըսենք կիմանանք բարոյապէս և նիւթականապէս բարձրանալ, մանաւանդ այն աղգին համար որ անկեալ է և ոտնակոխ : Ի՛նչ պէտք է ընել ուրեմն զնա բարձրացնելու համար տալ իրեն՝ գիտութիւն բարին և չարը որոշելու համար : Ամեն աղգաց անցեալը մեզի ցոյց կուտայ, թէ նոքա որ բարոյապէս ինկեր են՝ ինկեր են նիւթականապէս, երբ չափաւորութեան փոխարէն՝ աղքատութիւն, համբերութեան և տոկունութեան փոխարէն՝ անգործութիւն և ծուլութիւն, երախտադիտութեան փոխարէն՝ ապերախտութիւն, արիութեան փոխարէն՝ վատութիւն, ճշմարտութեան փոխարէն՝ սուտութիւն և խաբէութիւն, ինայողութեան փոխարէն՝ չռայլութիւն և վատնութիւն, սիրոյ փոխարէն՝ ատելութիւն և նախանձ, ընտանեկան համերաշխութեան փոխարէն՝ ղեղմոնք և անառակութիւն, կրօնասիրութեան փոխարէն՝ անկրօնութիւն և կրօնամոլութիւն տիրեր է ինոսա, դիրենք գահավիժեր այնպիսի բարձրութիւններէ՝ յորս երբէք չէ հասեր մեր թըշուառ աղգը :

Ի՛նչ պէտք էր ուրեմն ընել, ի՛նչ պարտաւորութիւն նոցա՝ որ աղգին գլուխը կը գտնուին իրենց հարք ժողովրդեան, կաթողիկոսք, պատրիարք և առաջնորդք, և նոցա որք ատենաբանք, ուսուցիչք, հեղինակք և լրագրապետք պէտք են ընել, հաստատել աճեցնել այն որ բարին էր, ոտնակոխ ընել չարը, բառնալ, որոշել, ցուրեան յօրոմէն, ուանիլ և ուսուցանել, բայց ի վերայ այսր ամենայնի ունենալ բնածին մտաւոր կարողութիւն կշռադատութեան, և չանալ չնչել նախ ինքեանս և ապա յայլս, նոյն բընածին կամ ստացական թերութիւնքը :

Խմբագրապետի մը այս յատկութիւնքը ունեցող է Մշակի առաջնորդը Պ. Գ. Արծրունին, ահա իրողիր մը մեզի համար և ամեն մտածող մարդկանց համար որ առիթ ունեցեր են զայն կարդալու :

Մշակի աքանչացողք կը քարոզեն թէ «Մշակն հայի ընթերցանութիւն սովորեցրեց» մինչդեռ մեզ համար Մշակը որ հայերէն լեզուն աղաւաղած է աւելի քան թէ սովրած, ո՛չ միայ ուրիշներուն սովրեցնելու յատկութիւնը ունեցած լինի : Այդ կարծիքը ունեցողները որ իրենց քաղաքին արուարձանները չեն եղած, և որ ոչ իրենց աղգին լեզուն գիտեն և ոչ աղգին վիճակը, մենք կը չիտրինք թէ ո՛ր ատորին դասակարգի մէջ արժան է դիրենք տեղաւորել : Այդ տողերը բարեմիտ՝ բայց ամենատգետ գրողայ և ընթերցողաց համար, կարելի էր քիչ մը առաջ տանիլ և հաւատացնել թէ Պ. Գ. Արծրունին ինքն է Հայոց աղգին նախահայրը, ինքն է Մեսրոպեան տառերուն հնարողը : Ինքն է հայոց պատմութեան առաջին հեղինակ Խորենացին, ինքն է Լազարեանց ուսումնարանին հիմնադիրը, ինքն է Մասիս լերան վրայ Նոյայ տապանը դրկող և դետեղող : Այդ Մշակը որ տողադարձ մը նաև չըգիտէ ընել, որ «ըսուածը ըսուածս» կը գրե, որ բաբելոնական լեզուն մը կը չինէ իւր անճոռնի կուլտուրականութեամբ, իւր փսիխոլոկիկականութեամբ, իւր իտիօթութեամբ և իրեն յատուկ ինտիլիկենցիայութեամբ, այս այն լրագիրն է որ Ա. լիշաններուն հայերէն սովրիլ կը հրամայէ և վերջը գրել և որ միտքը դրած է թէ լեզուն է աղգութեան նշանաբանը բոլորովին արտաքսմամբ կրօնին, այդ Մշակն է որ իրեն արբանեակք «Մշակն է որ «հայի ընթերցանութիւն սովորեց. «ըեց կը գրեն և կը հռչակեն : «Դարձեալ Մշակն է որ մտաւ խուլ «անկիւններ. անչարժութեան մէջ «գտնուող ոյժերը ի գործունէու. «թիւն հրաւիրեց, նոր ոյժեր ըս. «տեղծեց. . . »

Մշակի խմբագիրը չատ բան դըրեց այն խուլ անկիւններուն վրայ առանց գիտնալու, առաւ չատ նամակագիրներ սուտն ու իրաւը իրար խառնեց, բարի և վատ գաղափարներ չիտրեց ոամկին գըլխուն մէջ, և անչարժութեան մէջ գտնուղ ոյժ կարծուածները յանձնապատան ոգիտցաց բանակ մը համախմբեց որ զնացան անկիւնները ներքե և խոռոչներէ ցատկելով, իրենց մեծ վարպետին օրինակին հետևելով յաչ ու ձախ սկսան յարձակիլ և իրենց հարց համերաշխութիւնը՝ չափաւորութիւնը և իրենց հայրենի եկեղեցին սկսան քարկոծել, որովհետև սովորած էին լսել թէ «Մշակը կրօնք չ՚ունի» ուրեմն պէտք էր դգաստութեան ցոյց մը տալ և անկարգ եկեղեցականը չիտրիլ եկեղեցւոյն հետ և Լուսաւորիչ Գրիգորի դէմ Արծրունի Գրիգորը կանդնեցնել :

«Մշակն է, կըսեն այդ իմաստունք որ վկասած, յուսահատած ուսուցիչներին խրախուսեց, «նոցա գործունէութիւնը աղնուացուց . . . »

Մենք իմացեր ենք թէ խրատեց այն ուսուցիչներին որք անկարգութիւնը անկանոնութիւնը սովորութիւն ըրած՝ ուսումնարանը երեսի վրայ թողած՝ հոգաբարձուաց հսկողութեան դէմ կանգնած, Մշակի մէջ նախատինք ընդդէմ նոցա կը տեղային իրենց կըրթութեան և դաստիարակութեան պաշտօնը բարձի թողի ընելով. իսկ երբ Լիմմաճնայ ճեմարանին վիճակը բարեկարգելու համար Դէորդ Կաթողիկոս բարձր առճխիկներով համալսարանական և գիտնական տեսուչ և վարժապետներ կը բերէր, Մշակը ուսուցիչներին խրատեց Մշակը կրկին և կրկին յարձակմանքներ կ՚ընէր թէ դրամը տուողին և թէ առնողին վրայ և զարմանալի կշռադատութեամբ որ իրեն բնական է տեսչութեան պաշտօնին համար այնպիսի անձինք ցոյց կուտար, որ արդէն չատերուն յայտնի էին իրենց անվայել կեանքով և խռովարարութեամբ : Երբեմն ուսուցիչ եղած և յետոյ արհեստ մը նաև սովրած և կառավարական հանդարտ ոգի ունեցող երիտասարդ մը տեսնելով աղջկանց վարժարանի մը տեսուչ՝ որ խաղաղութեամբ և չնորհքով իւր գործը յառաջ կը վարէր, յանկարծ նպատակ կը դառնար իւր յարձակմանց և լի բարկութեամբ «թող գնա և գլնի չլնի» կը հրամայէր : Այս այն լրագիրն է որ եթէ նախնի դարերուն գտնուած լինէր Ծիսաս Փրկիչ հիւանդութեան կրպակ պիտի փակէր, առաքեալները ձկնորսութեան պիտի հրամայէր, զՐրիգոր Լուսաւորիչ սպասաւորութեան և վերջին ժամանակներուս Փռանքլին իւր Մշակի գրաչարութեան, զԱբրահամ Լինքոլն խոշտանգութեան և Կարտֆիլա նաւաձգութեան :

«Մշակն է կըսեն որ Եւրոպայի «ծանօթացրեց հայի հետ . . . » Այսպիսի ճշմարտութիւն ո՛վ չ՚ընդունիր, եթէ Մշակը չլինէր ո՛վ պիտի որոշէր լեռներու մէջ Արարատ, ո՛վ պիտի թարգմաներ Խորենացոյ և Եղիշէի գրութիւնը յՍենգլիարէն, Փռանսերէն, Իտալերէն, Գերմաներէն և Ռուսերէն. եթէ Դ. Արծրունին չլիներ ո՛ւմից պիտի սովրէին հայերէն պայրըն, Փեթրման, Լանկլուա և Տիւլորիէ, բայց աշխարհ.քս ապերախտ է և մանաւանդ հայ ազգը որ այսպիսի բարերար մը ճանչելու չափ ոչ խելք ունի և ոչ սիրտ, մանաւանդ Պօլսեցի հայ դաղթականութիւնը որ « կորած և վըճացած է հայութեան համար : »

« Մշակն է որ միջոց եղաւ Տաճկաստանի և Ռուսիոյ հայերի միմեանց ծանօթանալու : »

Ինչ երջանիկ և բարերաղդ ծանօթութեան Տաճկաստանի Հայոց և մանաւանդ Պօլսեցւոց, որ հաղիւ թէ ծանօթացեալ և Մշակ անուանով լրագրի մը դռոյթիւնն իմացած՝ նորա խմբագրին կատաղութեան ներթակայ եղան քանի քանի անգամներ : Բայց մեր ոամիկ ազգէտ ժողովուրդը որ Արծրունեայ հայրենակցաց լուսաւորութեան ներթակայ եղած չէ, ի չնորհս մեր Արևելքի, դեռ նոր իմացաւ թէ կայ լրագիր մը Ռուսահայոց մէջ որուն անունը Մշակ է և որոյ խմբագիրն է մարդ մը որուն անունն է Դ. Արծրունի. այս մեր պարզամիտներէն մին էր որ անցեալ օր կը հարցներ թէ՝ այդ Արծրունին որ այնպէս կատղած էր մեզ Պօլսեցւոց դէմ, գնացե՞ր էր Փարիզ բժշկուելու Բասթոռէն :

Մենք կը հաւատանք թէ Արևելքի խմբագրութեան մէջ կան մարդիկ որ գիտեն թէ ամբարտաւանութեան՝ նախանձու և չահասիրութեան կատաղութիւնն է ի Մշակ և յիւր խմբագիրն, և այս տեսակ հիւանդութեանց Բասթոռի դարմանը օգուտ չկրնար ընել, բայց Արևելքի մէջ այդ յօդուածը ընթերցողը ակամայ նաև այդպէս կը մտածէ որովհետև Մշակի անսահման տգիտութեան միչտ ընկեր տեսած է նորա անսահման լրբութիւնն և յիմար առաջնորդութիւն : Նա երբէք չէ հասկըցեր թէ այդ նը դաւաճան բարեկամ մի է, յառաջ քան զուսանելն ուսուցիչ կընէ զմարդ և տգէտ ժողովրդեան մը ծափահարութիւնք՝ տակաւ գլուխները կը գինեհարեն :

Քոռնելլ Մեճն, (որ ըստ Մշակի ֆռանսիական խոհանոցի կլասիկական անպիտան արհամարհելի հեղինակ մի է) որուն համար Նապոլէոն մեծն կըսեր թէ « ինձ ժամանակակից եթէ լիներ գինք իշխան կընէի», կըսեր «թողէք այդ «չորս տողերը որ իմ գրածս են՝ «և չեմ հասկնար, որովհետև ժողովուրդը ի՛նչ չափ չի հասկնայ՝ «ա՛յնչափ աւելի կը ծափահարէ : » Ամեն գրող՝ ամեն հեղինակ պէտք է գիտնայ, և ամեն հրապարակի մարդ նաև պէտք է գիտնայ, թէ ժողովրդականութեան պէս յողդողդ և անկայուն բան չկայ :

Բայց ի՛նչ որ ամբարտաւանութեան մէջ արժանաւորութիւն մը կայ և որ այդ մոլութիւնը՝ թէպէտ միչտ մոլութիւն՝ սիրելի կրնայ ընել չափով մը, թշուառութեան՝ անյաջողութեան քաջութեամբ տանիլ և չնուաստանալ, դժբաղդարար չերևիր Մշակի մէջ :

Ինչ է այդ գոռոզ հրատարակութիւն, « Ա. յսօր Մշակ 1400 հատ « կը տպէ », և վերջը մի քանի ամիս յետոյ երբ կիմանայ, թէ ախոյեան լրագիր մը ամենօրեայ կը դառնայ, և նոր տարւոյն իւր Մշակի բաժանորդաց թիւը դեռ 700 կը տեսնէ, ահաբեկ կսկսի ողորմելի ձայներ արձակել և լալագին « Առ ձեղ կը դիմենք ո՛վ Հայոց ժո« ղովուրդ . . . ձեղ կը դիմենք քա« հանայք . . . առ ձեղ տիկնայք . . . « առ ձեղ վաճառականաց դասք . . » երկեք բաժանորդ գրուեցեք որպէս զի Մշակ ապրի, և լուսաւորութեան ջահը չչիջանի, և նոյն միջոցին կը մոռնար թէ այդ ամեն դասք իրեն մտրակի բաժին ունեցեր էին, « եկեղեցականք աղերսուրք ազգականութեան, » « թիֆլիզլու կանայք խառնակեցիկք, » « վաճառականք հաստափորք՝ խաբեբայք՝ նենգողք և չահասերք, « համալսարանականք անմիտք՝ իմտիոթք և անբարոյականք, » « աղքային բարերարք անգութ վաշխառուք, աղքատաց յափշտակողք, » « գիտնականք քօրմք և կրօնամոլք և տկարամիտք » : Եւ այս ամեն սիրելի և քաղաքական խօսքերէն վերջը « առ ձեղ կը դիմենք » և ինչո՞ւ . . . որովհետև դրամական արկղը դատարկ է, որովհետև Մշակին կեանք պէտք է տալ : Նուաստութիւն է, եթէ ըսէ ոք, ոչինչ, մի՛թէ ժողովուրդը յիշողութիւն ունի : Մշակի համար, Արծրունեաց իշխանական պատկին համար մուրալ ամօթ չէ. մի՛թէ Պօլսեցիք հայրենի երկրին դպրոցներուն և հացին համար չի մուրացին, և ինք Մշակ գործակից չեղա՞ւ. հայուն կենաց եթէ պէտք են հաց և գիտութիւն, ևս առաւել պէտք է Մշակ :

Մի՞ օր մը կ՚իմացներ աշխարհիս թէ կիրակի օրը իւր տասնամեայ Ծոբեվեանի հանդէսը կատարեր էր, և թէ տան և աւելի կոչնականք Մշակի յատուկեանակ կենաց բաժակներ դատարկեր էին, և այս մեծ լուրը իմացնելով իւր զնաղան գաւառներէ ստացած հեռագրաց բարեմաղթութիւնքը կը տպէր : Յաջորդ տարին Մշոլրագրի կուսակիցք նորա 25 ամեայ յոբելեանը տօնելու առթիւ առանց խմբագրին յայտնելու ըստորագրութիւն բանալով լինջոյք մը կուտային, յոր կը հրաւիրեին նաև ուրիշ խմբագրաց հետ Մշակ

(*) Տես, Ս.շ. 1874 64

անվայել միջոցներ հնարողաց և (նոցա թելադրութեամբ) Թէրվիպաշեանի քեռորդւոյն (Թաւիտ-ռաշիջիկ Քրիստոսաուր Կլամճեանի) կատարած սքանչելի դէրին վրայ։

«Ս. Հայր, Վանայ հայ ժողովուրդն յոյժ կը ցաւի տեսնելով որ քանի մը խռովայողք կը համարձակին արատաւորել Պողոս Սրբազանի նման մի բարձր անձնաւորութիւն, որ բազմամեայ գովելի գործերն աղգն և կառավարութիւնն յաճախ գնահատած են և գնահատեն։

«Արդ մինչև ե՞րբ աղգին բարերարք այսպիսի խռովայոյզ չարհաղէտներէ պիտի զրպարտուին և արատաւորին, մինչև ե՞րբ անմեղ զրպարտեալք ցաւ ի սիրտ հեռանան ասպարէզէն և չհաղէտ չահատակք խիղախեն ի վնաս Աղգին։ Արդարութի՛ւն, ուրեմն Ս. Հա՛յր, հատակ խիղախեն ի վնաս Աղգին։ Արդարութի՛ւն, ուրեմն Ս. Հա՛յր, սոյն խռովարարաց համար, և դարման՝ Վանայ ժողովրդեան վիրաւորեալ սրտին։ 50 Սոպրէրոնի։

— Արմաչի վանաց Գեր. Վանահօր կողմանէ ի Պատրիարքարան ղրկուած հերքման թղթի մը պատճէնն է հետեւեալն։

«Ընթերցոյ ի լրագիրս՝ երէկ խառն ժողով ազգային վարչութեան յորոշել իւրեամ տալ զվկայագիր եպիսկոպոսութեան ի ձեռս Սահեփան վարդապետի առաջնորդի Նիկոմիդիոյ, յաւելեալ է ուրոշել կոչել նմա յայսմ հետէ և Մխիթար Աբմաչու վանից։

«Արդարև Սրբազնութիւն Ձեր և ժողովք՝ որում նախագահ բազմիք, կարէ տալ ի ձեռս վարդապետի ուրուք թուղթ ընծայութեան առ Հայրապետն յեպիսկոպոսութիւն միոյ ի վիճակաց ըստ օրինաւոր խնդրոյ ժողովրդին, և ըստ բաւական պատճառաց ընծայեցնելոյն։ Սակայն, ո՛ր օրէնք, ո՛ր պատշաճութիւն և կամ ո՛ր գինչ և իցէ սովորութիւն առաջնորդեաց ժողովոյդ զվարդապետ ոք առանց առաջարկութեան և խնդրոյ գըլխաւորի կամ վանահօր՝ որոյ անդամ իցէ այն՝ յեպիսկոպոսութիւն յուղարկել։ Ե՞րբ տուեալ իցեմ թուղթ ընծայութեան, ընթերցաւ ինչ յատենի ձերում թուղթ չինեն կամ ի մեր միաբանութենէ դրեալ զհանգամանաց Ստեփան վարդապետի, և զհարկէ եպիսկոպոսանալոյ դմա հանդերձ ցուցակութեամբ իսկագոյն արժանեաց դոքա։ Եթէ ես իցեմ վանահայր միաբանութեան Աբմաչու վանից, երբէ գուցեն յիս միտք և ղօրութիւն յիշողութեան և եթէ իմանամ զղօրութիւն և զկերպն հոգեւոր իշխանութեանս հաստատեալ կառավարական և ազգային արժանութեամբք և վաւերացելոյ օժանդութեամբ եպիսկոպոսական կարգի, ես չունիմ այդպիսի թուղթ, և ոչ իսկ այդ անուն միաբան վարդապետ ոք ոչ առ իս ի վանս և ո՛չ արտաքոյ ի ժողովրդեան։

«Միաբանք Վանաց ոչ ի Հայրապետէ, ի Պատրիարքէ, և յայլոյ վիճակաւոր եպիսկոպոսաց ժողովին ի գումար և միամտին ի հաւաքակորդութիւն կրօնաւորական իրաւանց, այլ ի հաւանութենէ նոյն իսկ միաբանութեան և ձեռնադրութեամբ եպիսկոպոսին՝ որ ի վերայ նորա։ Եթէ աթոռադ, որոյ հրահանգացն ի սահմանի աւանդութեան և եկեղեցական բարեկարգութեան համօրէն եկեղեցիք Թուրքիոյ անսալ պարտաւորեն, այդպէս ապօրէն վարի ընդ մերում իշխանութեան, և իրրև ընդ անզգայ խրատուիլակի գնալով՝ զչափաւորութեամբ սահմանի մերոյ յանդէս և կամ կանոնոյ զանցանէ, միթէ զուղղութիւն դադարդի եկեղեցական տեսչութեանդն հրամայեսցէ. ո՞չ ապաքէն անիշխանութիւն և անսաստութիւն յանկանէ այսի իշխանութեանդ քաջալերեալ համարձակի յամենայն յիրս եկեղեցւոյ։

Աղաչեմ, Սրբազան Տէ՛ր, հրամայեսցէ իմաստութիւն Ձեր ուղղել ժողովոյ զայդ վրիպակ՝ մանաւանդ թէ զգայթակղութիւն, զի մի՛ դուռն բացցի քայքայման և վնասակար խորհրդանց յիրս բարեկարգութեան վանօրէից։

Զօրինակ առաջարկութեանս լըրագրոյ և տուեալ եմ ի հրատարակութիւն, որ չկարծեմ թէ ցաւեսցէ զՍրբազնութիւն Ձեր. զի և իմ չափաւորութիւն առանց թուղթ ինչ հարցման կամ հրամանի ի Ձէնջ առ իս լինելոյ Նոր-Անանիոլ-ին առաջնորդի Նիկոմիդիոյ՝ ի նոսա ընթերցոյ քաղեալ յարձանագրոյ Պատրիարքարանիդ։

1886 Մայիս 16

Ի Ս. Վանս ՅԱրմաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ծանապարհն Խնդիրը բոլորովին վերջանալու մօտ է։ Սահմանագըլխոյն վրայ համաձայնեալ հետևեալն զօրքն ամէն կողմանէ եւս կը քաշուի ըստ կամայ մեծ տէրութեանց։ Պահեստի երկու կարգերը դրեթէ ամբողջովին ցրուած են. այս կարգերէն եղող 29000 զօրք իրենց տեղերը դրկուելու են ցարդ։ Նոյնպէս կը ցրուի հելլենական նաւատորմն ըստ արամադրութեան արքայական հրովարտակին։ Վերջին կառուց մէջ օսմանցւոց դերի եղած հելլեն զինուորք յանձնուեր են իրենց զօրավարին. 70 հոգի, որոց 4ն սպայ են։ Եթէ հելլենական կառավարութիւնը չարունակէ այս ընթացքը, կայսերական կառավարութիւնն ալ պիտի վուժայ ցրուել համախմբեալ զօրքերն, և ահա արդէն կըսուի թէ մեծ տէրութիւնք միաբանած են բառական ապահովութիւն համարիլ Յունաստանի զէնքնկեցութեան մէջոյներն, և հետևաբար բառնալով հելլենական ծովեզերաց պաշարումն՝ հեռանալ այն չուրերէն, և երթալ մնալ ժամանակ մը Մուտայի ծովախորշին մէջ։

Պապուանչան, Ասիէնան, Պաշան և Պոլիա։ — Ելմտական նորակազմ յանձնաժողովոյ նախագահ կարգեցաւ ընդհանուր Ֆախուդ նախորդ հաշուակալ Իպրահիմ էֆէնտի։ Սոյն յանձնաժողովոյ անդամ անուանեցան տասանորդական սըրոց նախորդ տնօրէն Հաճի Ալիւֆ էֆէնտի, Հիճազի նախորդ տումարակալ Հաճի Բաշիտ էֆէնտի, Տըբապիզոնի նախորդ տումարակալ Զիւհտի պէյ, ելմտական խորհըրդոյ նախկին անդամ Բէրթէվ փաշա և տասանորդական տրոց նախկին անօրէն Ջէմալ պէյ, որոնք յանձնուեցաւ նաև յանձնաժողովոյ ընդհանուր քարտուղարութեան պաշտօնը։ — Պէյթ-իւլ-Մալի տնօրէն կարգեցաւ ելմտական մասնաժողովոյ առաջին քարտուղար Հիւսնի էֆէնտի։ — Երրորդ աստիճանի Օսմանկյէ պատուանշան տրուեցաւ առողջապահական դիւանի երկրորդ ճիւղի դեր-անօրէն զինուրական բժիշկ դնդապետ Հալիմ պէյին։ — Երկրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ գերմանական դեսպանատան առաջին թարգման Պ. Ա. քրէօտերի։ — Երրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ պիտական խորհրդոյ անդամներէն Հիւսնի պէյին։ — Զորրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ կայսերական անձնական դանձուն պաշտօնատան կալուածական վարչութեան օգնական Տիգրան էֆէնտիի։ — Իւլայի երկրորդ աստիճան՝ Իզմիտի գաւառին ընդհանուր հաւաքիչ Սիւլէյման Շէվքէթ պէյին։ — Երրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ Փաբլոյի Օսմանեան դեսպանի խորհրդական Յովսէփ Միխակ էֆէնտիի։ — Օգոստ. Սուլթանն առաջին աստիճանի Շէֆագաթ պատուանշան ընծայեց մայրաքաղաքիս ամերիկեան դեսպան Պ. Ֆօքսի տիկնոջ, և երկրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ Գերմանիոյ կայսեր Թիկնապահ և գերմանական խորհրդարանին անդամ Տօէնհօֆ կոմսին, որ ներկայ գտնուեցան կիւրակի գիշեր կայսերական պալատան մէջ գերմանական դեսպան Պ. Բաատովիձի ի պատիւ տրուած կոչունքին։ — Առաջին աստիճանի Մէճիտիյէ պատուանշան՝ հռչակաւոր Պ. Բաստէօւրի։ — Ալբէնքի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար կարգեցաւ Ալբերթ պէյ, և երրորդ քարտուղար՝ Պուլկարիոյ օսմանեան պատուիրակի քարտուղար Ալֆրէտ պէյ։ — Հալէպի Լվիգաֆի հաշուակալ կարգեցաւ Ա. պտ-իւլ-րահման էֆէնտի։ — Արտաքին գործոց նախարարութեան իրաւագէտ խորհրդականոյ օգնական անուանեցան Տիգրիսի օսմանեան նախկին հիւպատոս Գաարի պէյ եւ Գուլիմճեան Պետրոս էֆէնտիի որդի Յովհաննէս պէյ։

Բ. Դուռն նախընթաց երեկոյ հետագրով դոհութիւն յայտնելով Յունաստանի վերջին ընթացից, և մեծ տէրութեանց ի սկզբանէ խընդրոյն ցարդ խաղաղութեան և օսմանեան պետութեան իրաւանց պահպանութեան օժանդակութեան համար, ծանուցեր է թէ կը փափաքի միջնորդել որ մեծ տէրութիւնք բառնան հելլեն ծովեզերաց պաշարումն, եթէ համոզուած են որ Յունաստանի կառավարութիւնն անթերի պիտի գործադրէ զէնքնկեցութեան համար ըրած որոշումներն։

— Ներքին գործոց նախարարութիւնը չրջաբերականաւ պատուիրեց գաւառական իշխանութեանց՝ դատի և պատժոյ ենթարկել ի Թուրքիա մուտքն արգիլեալ լրագիր փոխադրողներն և գաղանի վաճառողները։

— Ծար տիւ Պոսֆոր գրած է թէ հելլենական երեք նաւք Սէլանիկ եկեր են, առանց արգելք տեսնելու եւրոպական նաւատորմէն։

— Կայսերական տիկնանոցի ծախուց վերատեսուչ Բէյմալ փաշա՝ որ բաւական ժամանակէ հետէ հիւանդ էր, բոլորովին առողջացեալ սկսաւ վարել պաշտօնը։

— Նախընթաց երեկոյ Պուլղարիայէն 60 մահմետական ընտանիք մայրաքաղաքս եկան, և Պրուսա ղրկուեցան։

— Սպարապետ Թիկնապահ-ներէն հաղարապետ Պէհճէթ պէյ՝ Դոսովա, և հարիւրապետ Միւնէյման էֆէնտի՝ կրետէ ղրկուեցաւ յատուկ պաշտօնով։

— Սերպիոյ արքայական դահուն հետամուտ Դարաեօրկեվիչ իշխանի կրտսեր եղբայրն՝ Ալէքսի իշխանը նախընթաց օրը մայրաքաղաքս գալով, Լիւքսէմպուրկի օթեւանն իջաւ։

— Օգոստ. Սուլթանի Թիկնապահ և զինուորական քննիչ յանձնաժողովոյ անդամ Իսմայիլ փաշա՝ որ չորրորդ բանակի արատքոյ կարգի ընդհանուր հրամանատարութեան պաշտօնով Կարին պիտի երթար, կայսերական հրամանաւ առայժմ յետաձգեր է այս ուղևորութիւնը։

— Երկուշաբթի կէս օրէն երկու ժամ ետքը Իզմիտէն եղնող շոգեկառայ կարավանը Պօսթանճըդէն քիչ հեռի ատաղձաբարձ ասյլի մը բախելով՝ կառաձիդը գծէն դուրս եղնելով խորտակեցաւ, և երեք կառք մէկմէկու վրայ եղնելով ուժգնապես ղեհանեցան։ 7 հոգի մեռան, որոց 6ն Հայ բեռնակիրք և գործաւորք են (երկաթուղւոյ ընկերութեան ծառայող) և միւսը կառախմբի պետ Սթամաթի անուն յոյն երիտասարդ մը՝ որ Գարթալ գնացած էր նշանածը տեսնելու համար։ Մեքենավարին (Շէրիֆ) ոտքերը չարդակոտոր եղեր են, և կարտանէն պետ Քունտուրի ալ ծանրապես վիրաւորուեր է։ Հայ գործաւորաց մարմինք Գատը գիւղի ազգային եկեղեցին, և յոյն երիտասարդինը՝ յունական եկեղեցին փոխադրեցան։ Ճուղարկաւորութեան առեն Սթամաթիի մօր ողբոյ աղաղակներն անհանդուրժելի էին, նոյնպէս Հայ գործաւորաց միոյն կնոջ ճիչերն, և ուրիշի մը եղբօր եղերերդութիւնք։

— Պուլղարաց Լբղարքը Պրուսայի ջերմուկները կերթայ։ Կայսերական հրամանաւ հետագրեալ է առ կուսակալն Պրուսայի՝ պատուով ընդունիլ և հոգալ ծախքերը յորժամ ընակի անդ։

— Անցեալ կիւրակէ Բերայի ռուսական հիւանդանոցին մէջ յետ միօրեայ հիւանդութեան մեռաւ Ալէքսանդր Եգորովիչ Մարկուզով անուն անձ մը, ի հօրէ Հայ և ի մօրէ ռուս։ Ռուսիոյ նշանաւոր գործարանատէրոց ոմանց կողմանէ Պօլիս եկած և ընդարձակ վաճառատուն մը բացած էր պարոս. կոստանցի Հայի մը հետ։

— Պաշտօնապէս կը ծանուցուի թէ, բաց ի սոսկական զինուորներէ, ամեն ոք՝ մինչև իսկ Օգոստ. Սուլթանն երբ անցնին կամուրջէն, պիտի վճարէ անցագինը։

— Մայրաքաղաքիս իտալական դեսպանին հայրն որ կը պատրաստուի եղեր Պօլիս գալ և ամառն որդւոյն քով անցընել, յանկարծամահ եղեր է ամարանոցին մէջ ի Բիչա։

— Իզմիրի բնակիչներէն Պ. Էօժէն Պիճնի՝ որ կը պատրաստուի եղեր Պօլիս գալ և դեղագործական քննութիւն տալ, յիշելով որ Րումելիի երկաթուղեաց բաժնետոմսերը ունի, անոնց թիւերը նշանակեր, և երբ Պօլիս հասեր է՝ ճշդելով թէ այդ տոմսերն հետզհետէ երեք պարգև (1 միլիոն ֆրանքի չափ) շահած են, Իզմիր վաւ թացեր և տոմսերը բերեր է։ Մոռցած է եղեր թէ բաժնետոմսերն ունի։

— Եանեայի մէջ մուրացկան մը սպաններ է ալպանիացի մը, 3 ղրուշ առնելիքը չվճարելուն համար։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 24 Մայիս 1886

Օսմանեան Բանասիրաց	17—3
Րումելիի Երկաթուղի Ֆրանգ	38—25
Թրամուէյ	Լ. 0. 2—90

Օսմանեան վիրան 100 ղրուշէն

Մէճիտիյէ	108—2
Մէճիտիք	98—30
Հինգնոց	102—20
Վեցնոց	102—35
Րումելի Թղթադրամ	9—14
Րումելի արծաթ	89
Ռուսիոյ Բոլ	90—24
Գաղղիական լիրա	88—14
Անգղիական »	110—30
Դրամիս	31—20

Ընդհանուր ելեւմտական տեսութիւն 98 տարի ետքը

թ.	ֆր.	թ.	ֆր.	թ.	ֆր.	թ.
263639	300000	495532	1250	343060	1000	1461974
418315	25000	630255	»	356628	»	1498153
543341	10000	687488	»	452832	»	1518347
415903	»	680016	»	493531	»	1518350
297163	2000	782924	»	495533	»	1719497
567831	»	886986	»	637079	»	1785706
691084	»	886287	»	975097	»	1826251
950862	»	1498153	»	1028778	»	1848864
1241942	»	1513988	»	1406365	»	1883968
1883969	»	405298	1000	1114364	»	1910714
3541	1250	413372	»	1310874	»	1928017
240095	»	458580	»	1380830	»	
396696	»	240408	»	1406130	»	

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Ալբէնքի դեսպանք տակաւին վերադարձած չեն։ Իտալական դեսպանն ի Մուտա իտալական վէպտէթա մարտանաւուն մէջ կը դատնուի դեռ, և անդղիականն ի Մալթա, իսկ աւստրիականն ի Դորֆիու իրենց կառավարութեանց հրահանգին կըսպասեն։

= Յունաստանի կառավարութիւնը բաղքեր է առ մեծ տէրութիւնս թէ հելլենական ծովեզերաց պաշարման պատճառաւ ժողովուրդը կը տառապի, բայց մեծ տէրութեանց կողմանէ պատասխան տուեր է թէ Յունաստանի կըրած նեղութիւնն իւր ընթացիկ պատիժն է, և թէ այդ վիճակը կը բարւոքի՝ ժամ յառաջ ի նախկին կացութիւն վերադառնալով։

= Պուլղարիոյ Ազգային ժողովն երկու չաբաթէն արտաքոյ կարգի նիստ պիտի ընէ, և առաջին գործը պիտի լինի որոշել թէ Պուլղարիա և Արևելեան-Րումելի մի՞կ ազգային ժողով ունենան, թէ՝ երկուքն ուրոյն ուրոյն։

= Գերմանիոյ կեդրոնական և արևմտեան այլ և այլ նահանգաց մէջ սոսկալի փոթորիկներ և թաթառներ տեղի ունենալով՝ մեծ վնաս պատճառեր են և բազմաթիւ մարդիկ ղոհ եղեր են։

= Պուլղարիոյ և Արևելեան-Րումելիի երեսփոխանական ընտրութիւնք բոլորովին նպաստաւոր են Ալէքսանդր իշխանին և նախարարութեան իւր։ Ի Պուլղարիա ընտրեալ 145 երեսփոխանաց միայն 3ը ընդդիմադիր կուսակցութենէ են, և Արևելեան-Րումելի 137 ընտրելոց 13ը ընդդիմադիր։ Ընդ-

դիմադրաց պետ Պ. Զանքոֆ ամբարի վիճակի մէջ կը գտնուի։ Ի գաւառս ընտրողք քուէարկութեան վայրերը թափուր են կեցեր Ազէքսանդր իշխան երգելով, և ի քաղաքս լուսավառութեամբ ողջունուեր է՝ նախարարական երեսփոխանաց ընտրութիւնը։

= Րումանիոյ և Աւստրօ-Հունգարիոյ կառավարութիւնք մաքսային պատերազմ մը սկսած են։ Աւստրօ-Հունգարիոյ կառավարութիւնը բոլորովին արգիլեց Րումանիայէն դուարի, խոզի և երիվարաց ներմուծումն, և 100ին 30 մաքս սահմանուեցաւ բումանական ընդհանուր վաճառաց վրայ։ Րումանիոյ կառավարութիւնն ալ փոխադարձաբար այսպէս կը վարուի։

= Ռուսիոյ կայսրն յատուկ հրովարտակաւ մը երախտապարտութիւն յայտներ է Ալէքսիս մեծ Դքսին, ընդհանուր ծովապետին, նաւատորմին մատուցած կարևոր ծառայութեանցն համար։

= Ռուսիոյ կառավարութիւնը 100 միլիոն րուպլի վոխ կառնու ներքին ծախուց համար։

= Գերմանիոյ կայսրը, Սպանիոյ նորածին թագաւորին ծնընդեան առթիւ վաճառքագործութեան եղանակաց ծանօթանալու և իր իշխանութեան մէջ տարածելու նպատակաւ։

= Ռուսիոյ կառավարութիւնն՝ որ Կովկասու ամէն ցեղերէն զօրք առնելու ծրագիրը մը ունէր, թողեր է զայն, որոշելով որ միայն քրիստոնեայ ազգերէն զօրք առնու, և մահմետականներէն ի վոխարէն դրամ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

×× Եկեղեցւոյ մէջ պատել, զոր տեսած է անգղիացի ուղևոր մը Մէքսիկայի Շալան քաղաքի մէջ վանական մեծ եկեղեցւոյ մէջ, և կը պատմէ, յոյժ զարմանալի է։ — «Մերուն տաղաւարհար մը և Յուդայահար կին մը կը նուագէին. պարողներն էին կարճ պարեգօտներ հագած, և գլուխնին փետրօք զարդարեալ 8 տղայք, և բոլոր պիտակազգեստ ու ծաղկէ պսակներով վարսերնին յարդարած 8 աղջկունք։ Պարողներն եկեղեցւոյն միջավայրն մայր խորանին դէմ կանգնած էին, և ի մեծ ղարմանս մեր՝ սկսան նախ բալէ պարել, ապա վալս մը, յետոյ Սըքիս մը, վերստին վալս մը և հուսկ ուրեմն Գաւոթ մը։ Ինչ կը թուէր իբր սովորական ինչ կը դիտէին այս պարերը։ Նուագածուք պարի քայլերուն յոյժ համընթաց կը նուագէին։ Գաւոթին վերջանալէն ետքը պարող տղայք իրենց պարակցայ ձեռքէն բռնելով, կարդ մը կազմեցին և ծնրադրեցին խորանին առջև. ներկայք ևս նոյն ըրին. արարողութիւնն այսպէս վերջացաւ և ներկայ եղողները մեկնեցան։ — Սպանիացւոց տիրած բազում կըռապաշտ երկրայ մէջ ալ ի հնումն մեհեաններուն մէջ տօներու օրերը կռապաշտք կը պարէին, և անհաւանական չէ որ պարելու այս սովորութիւնը կռապաշտական օրերէ մնացած լինի։

×× Գեղեցիկ Տէրը» մը։ — Վերջերս ի Փարիզ Լամոդ դ.քսուհւոյն ապարանքին մէջ առաւօտեան նուագահանդէս մը տեղի ունեցաւ։ Հրաւիրեալոց մէջ կը գտնուէր Օրիորդ Ֆօլըմ՝ Միացեալ Նահանգաց նախագահ Գրիվէլենի խօսակցակէն, որ հատանականաբար օժտուն պատրաստութեան համար գեռ Փարիզի մէջ էր։ Դեռատի տիկինը խօսակցութեան նիւթ եղած էր ակըմբուն մէջ, և դրեթէ ամէն ոք զնա կը դիտէին։ Բարձր դասու աղնըուականք չուրջը բոլորեալ կը խօսէին նորա դրից վրայ, յոր կոչեալ էր. և ահա յանկարծ նշանաւոր տիկին մը ըսաւ ցաւակցաբար, — «Ամէն ինչ բարի, բայց դուք, տիկի՛ն, տիտղոս չունիք և զձեզ պիտի կոչեն պարզապէս Տիկին Գլիվլենտ։ — Այո՛, օտարք այդպէս պիտի կոչեն զիս, պատասխանած է շնորհագեղ ամերիկացին, բայց նախագահն ի մանաւորի յոյժ ընտիր տիտղոս մը տուած է ինձ։ — Ամէն օք հետաքրքրութեամբ ուզած է լսել Օրիորդ Ֆօլըմի տիտղոսն։ — «Նա կը կոչէ զիս Իւր Սիրելին, ըսած է օրիորդը շառագունելով, կին մը ասկէց աւելի լաւ ամուսնոյ մը կրնա՞յ փափաքիլ։» — Տան տիրուհին գրկած է շնորհակալ հրաւիրեալն և ըսած է նմա. — Շատ իրաւունք ունիս, և կը մաղթեմ որ այդ տիտղոսը պահէք մինչ ցմահ։

×× Հնդուերջական նկատ մը։ — Մօտերս ամուրի երիտասարդ մը մեռած է ի Բեդրսպուրկ և եղբօրորդւոյն թողած է Բեդրսպուրկի և Մոսկուայի մէջ ունեցած տուներն ու պետական պանքային ի պահ տուած արժեթուղթերն։ Ժառանգորդն պարտի որոշեալ ժամանակի մը մէջ այդ արժեթղթոց տոկոսներն ընդունիլ, և որոշեալ ժամանակէ յառաջ չվաճառել անշարժ ստացուածքն։ Հետևեալ պայմաններն ունի այս կտակն, որոց ենթարկեալ է ժառանգորդն։ 1. — Մխախտ և քթախոտ չգործածել. 2. — Թուղթ չխաղալ. 3. — Կըտակին վաւերացմանէն 6 ամիս ետքը ամուսնանալ և չմնալ ամուրի։ Իրրև կտակատարք նշանակուած են վախճանելոյն երեք բարեկամք, որք իրաւունք ունին յիշեալ պայմանաց չգործադրուած ատեն, ժառանգորդին ձեռքէն առնելով ժառանգութեան մնացորդը, հաւասարապէս բաշխել նորա զաւակաց։ Առաջին երկու պայմանաց համար ժառանգորդն քսութիլ սկսած են, և բնականաբար երրորդ պայմանին համար ալ պիտի ընեն նոյնն։ Եթէ որոշեալ ժամանակէ մը ետքը չկատարէ իր խոստումն, չամուսնանայ, ձխէ և թուղթ խաղայ, կտակատարք որ չորս աչօք կը հսկեն նորա վրայ, ետ պիտի առնուն բոլոր ժառանգութիւնը։ Խեղճ ժառանգորդն նշանաւոր ձխով և խաղամոլ մ'է, և մեծ նեղութիւն կը կրէ պայմանները կատարելու համար։

×× Զկանց չէզոք-ընչաք։ — Նշանաւոր փորձեր եղած են յարդքննելու համար թէ ձուկն յիշողութիւն ունի՞, թէ՝ ոչ. և նորագոյն փորձ մը սա՛ արդիւնքն ունեցած է։ Դայլաձուկ (Մուրնա պալըը) մը որ ընդհանրապէս գետոյ մէջ կը գտնուի, կենդանական պարտիզի աւազանին մէջ դրուած էր և մօտը թոյլ տրուած փոքր ձուկերն ուտել սովորութիւն ըրած էր։ Հաստ ապակիով մը անջրպետեցին զայն մօտը գըտնուած փոքր ձուկերէն. ամէն անգամ որ ուղէր մօտենալ ձկանց, գլուխը կը բախէր ապակիին, և յաճախ ս'ընէ ուժգին որ գըլխոյն ցաւէն յետոյ կընկրկէր նուազեալ. ապա կազդուրեալ՝ վերստին կը փորձէր մօտենալ որսին, բայց միշտ անյաջող. Թուի թէ երեք ամսէ ետքը համոզուելով՝ չէր կրկներ փորձերը. վեց ամիս չարունակ այդ ապակին անջրպետեալ ձուկէն ետքը վերցուեցաւ. և գայլաձուկն կրնար ազատօրէն աւազանին ձըկանց մէջ չրջիլ. բայց այս անգամ կը լողար առանց ձկանց վնասելու, և անոնցմէ մէկ մասնաչափի չափ հեռու կը կենար և գոհ կը լիներ աւազանին մէջ նետուած միսն ա-նոնց հետ մասնակցութեամբ ուտելով։ Սակայն երբ նոր ձուկ մը դրուէր աւազանին մէջ, յայնժամ գայլաձուկը չէր յարգեր զայն և կը կլլէր անմիջապէս։ Այսպէս տակաւ վարժուած էր իւրաքանչիւր ձկան պատկերոյ, երբ ապակին գետ անդ կար և այդ ձկունք իրեն հետ նոյն աւազանին մէջ էին. կը յիշէր ա'յն յաւալի հարուածներն զոր կը կրէր ամէն անգամ երբ ուղէր մերձենալ ձկանց։ Այս ցաւոց յիշատակն ամիսներ տևեց. ցաւին ճշմարիտ պատճառը չէր գիտեր և չէր վերագրեր ապակիին, միայն թէ պարզապէս կը նայէր ի սկզբան իւր բռնել կարացած ձըկանց, զոր յոյժ լաւ կը ճանչնար, և կրնար զանազանել նորեկ ձուկերն հիներէն։

×× Ազնուական լըտէէր 36500 հատ են։ Աշխարհի հինգ մասերէն միայն Եւրոպայի մէջ կան 20,000։ Եւրոպական մեծ տէրութեանց մէջ Գերմանիա բարձրագոյնն է և Ռուսիա ստորնագոյնն է ի մասին քանակութեան լրագրաց։ Ի Գերմանիա կը հրատարակին 5500 լրագիրք, յորոց 800ն հանապազօրեայ են։ Երկրորդ կարգին կը պատկանի Անգղիա, որ ունի 4000, որոց 800ն օրական է. գրեթէ նոյնչափ է Դաղիոյ լրագրաց թիւն։ 1568 լրագիրք կան ի Փարիզ. 2506 ի գաւառս. հանապազօրեայ լրագրաց թիւն է 360։ — Իտալիա ունի 1400 լրագիր, որոց 16ն օրական են. ի Հռոմ կան 200. Միլանի մէջ 140. Նաբոլիի մէջ 120. Թուրինի մէջ 94. Ֆիորէնցայի մէջ 79։ — Աւստրիա ունի 1200, որոց 150ն հանապազօրեայ են։ — Սպանիա՝ 850, որոց երրորդ մասն օրական է։ — Ռուսիա ունի 800 լրագիր. Բեդերսպուրկի մէջ 200. Մոսկուայի մէջ 75. ասոնց շատերն երկու կամ աւելի այրենքն ռուսերէն գերմաներէն և գաղղիարէն լեզուօք կը հրատարակուին։ Ծունաստանի լրագիրք համեմատաբար առաւելագոյն են, անդ գրեթէ ամէնափոքր գիւղն անգամ ունի իւր թերթն։ Զվիցերիա ունի 430 լրագիր, որոց մէ քանին արդարև ընտրագոյն են։ Պելճիա և Հոլանտա ունին 300։ — Ամբողջ երկրագնդիս մէջ կանոնաւոր հրատարակեալ թերթք 3000 են։ — Զինատան լրագիրք համեմատաբար յոյժ նուազ են. կառավարութեան պաշտօնական թերթը՝ Ռինկ-Բաո կը հրատարակուի ի Բէքին ամէն օր երեք տեսակ տպագրութեամբ, իւրաքանչիւրն մանաւանդ գոյն ունեցող թղթոյ վրայ։ Ուրիշ նշանաւոր լրագիրք են Շանկայի մէջ հրատարակեալ Չէն Բաօ և Պաո — Բաո, և Քօրէայի կառավարութեան թերթը։ Ճաբանի մէջ մամլոյ յառաջադիմութիւնն յոյժ արագ է. անդ կան իբր 2000 լրագիրք։ Եւ րեք նշանաւորագունից տեսակներն են Հօչիլմհուտ, Թոյչիմպուտ և Մաւնիչիչիմպուտ։ Պելճիստան և Ամերիկեան յարդ չունին ա'ւելի լրագիր։ Պարսկաստանի մէջ կան վեց հատ։ — Ամերիկէի մէջ հրատարակուող լրագրաց թիւն է իբր 300, յորոց 30ը յեղիպտոս են։ Միացեալ Նահանգաց և Բանատայի մէջ հրատարակեալ լրագրաց թիւն է 14,147, երբ աշխարհի լրագրաց կարգն իրենց լեզուներով դասել ուզուի, անդրկական լեզուն կը բռնէ առաջին կարգը. գերմաներէնն՝ երկրորդ. ապա գաղղիարէնն և ապա սպանիականը։

ԲՈՒՌԱՐԱՆ

Օսմանեան լեզուէ

Աչխատասիրեաց Մ. Իհրան Էֆէնտի Աբրիկեան. հրատարակուեւյաւ վերջերորդ տեսրն ալ։ Գինն՝ 60 փարայ։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ

ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտամանց վրայ, պատմութեամբք՝ արձանագրութեամբք եւ հին ու նոր վաւերական պաշտօնագրովք հաստատեալ զամենայն։ Ընթերցողն լուսոյ ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակաց վրայ։ Անշուշտ հարկ, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում Սսոյ կաթուղիկոսական խնդիրն կը յուզուի դեռ եւ Պալաժեանցի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քաջ հետազօտած ու խմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքննուին Հայոց։ Գրքին սկիզբը ղրուած յանկը աչքէ անցուցողն պիտի տեսնէ, թէ ո'րչափ նշանաւոր անձեր նշանակեալ են իմաստով, եւ քանի' նըւիրական ու մեծարելի է Հայկակ անհարատութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամէն Հայ ունենայ հատ մը. կարժէ որ ամէն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կը գտնուի լրագրոյս Գրասենեակը, Պօլիս Պալըգ-բազար Նաֆիյէ-խան վերի յարկ թիւ 16. Պաղչէ-գարու Զըրաւճառ Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏԻՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի եւ աղիքներու ամէն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, ամէն չղային տկարութեան ուժաթափութեան եւ տխրութեան համար. կը ջնջէ եւ անհետ կընէ ամէն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի եւ երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ զրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կյառաջացնէ, եւ մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց ըսկզբնապատճառ կըլլան, առողջ ու ժուժկալ եւ բնական դիրքը կզգենու։

ONCUENT HOLLOWEY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն եւ վէրք բուժելոս մասին ունեցած պատահականութեանը չհաւասարիր բերնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թուլնաւոր վէրքեր, ուռնգք, քաղցկեղ (էրբենէ), սրունկի եւ ստեռնց վէրքեր կամ բոլորովին կանցնին եւ կամ կպահանան. օգտակար է նաեւ հարբուխի, հաղի, սրտի բարախման, մանաւանդ յօդացաւ (եղէ) ըսուած հիւանդութեան։ Իր կազդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (ըզրաճ) հիւանդութեան ապահանիչ զօրութիւնը ինչ ատիճան որ ըլլայ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տիփի վրայ, որ կգտնուի ամէն դեղավաճառներու քով, եւ մանաւորապէս Պաղչէ-գարու Թաշ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ամէն օր Հոլլօուէյ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔ

ՎԻՃԱԿ Ի 30 ԱՊՐԻԼ 1886

ՊԱՀԱՆՋԻՔ	Ղրուշ		ՊԱՐՏՔ	Ղրուշ	
Բաժինք-չգանձուած	550000000		Դրամագլուխ	1100000000	
Մնացուկ ի կ. Պոլիս	86482176	24	Պահպնօթք ի չրջաբերութեան ի կ. Պոլիս	45767600	
Մնացուկ ի Մանաճիւղս	35366912	12	Պահպնթ. ի չրջաբերութեան ի Մանաճիւղս		
Գանձելի վոխանակադրք	413946934	29	Վճարելի վոխանակդրք	77223813	9
Ընթացիկ հաշիւք կայսրական-պարտականք	749352272	35	Ընթացիկ հաշիւք կայսրական-պահանջողք	447994544	11
Ընթացիկ հաշիւք զանազան-պարտականք	159981024	28	Ընթացիկ հաշիւք զանազան-պահանջողք		
Փոխառութիւնք՝ արժեթղթոյ եւ վաճառոց վրայ	129288462	9	Աւանդք՝ որոչ պայմանաժամով	70913787	34
Անշարժ եւ չարժական գոյք	12267507	37	Պահեստք զանազան	314290335	
Զանազանք	6354545	12	Վճարելի չահաբաժինք	400890	
			Զանազանք	86448866	12
	2143039836	26		2143039836	26

Վաւերացեալ ճշդութիւնն ըստ տուեալաց

ՏՆՕՐԷՆ
ԷՄ. ՏՐՎՕ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ
Մ. ՖՕՍՓՈՐ

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԱՆԵԱՆ
Բիզա-փազա խան թիւ 3